ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի
փորձագետ Գոհար Քոչինյանի կողմից
11.03.2026-11.06.2026թթ. ժամանակահատվածի
ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացրել եմ «ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկու տուֆերի հանքավայրի «Տուֆարտ» տուֆերի և բազալտների տեղամասում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների մասին՝ 01.03.2025թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննությունը: ՏԿԵՆ նախարարի հրամանով հաստատվել են տեղամասի պաշարները:

2. Իրականացրել եմ «ՀՀ Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի հանքավայրի Ամառանոց տեղամասում կատարված երկրաբանա-հետախուզական աշխատանքների արդյունքների մասին՝ 01.10.2025թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննությունը: ներկայացված նյութերի վերաբերյալ կազմել եմ փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության արդյունքները կքննարկվեն Ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի առաջիկա նիստում:

3. Իրականացնում եմ «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Արմենիուս-2» տեղամասում և «Արմենիուս» տեղամասի լեռնահատկացման սահմաններում 2025թ. կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների վերաբերյալ՝ 10.12.2025թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննություն՝ նախնական դիտարկումների արդյունքների ամփոփմամբ, ինչը գրությամբ կուղարկվի ընդերքօգտագործողին:

4. Իրականացնում եմ «Հաշվետվություն ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ՝ 01.05.2026թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննություն՝ հաշվետվության լրակազմության ստուգում:

5. Մասնակցում եմ «ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործական կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ և 01.01.2022թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության գործընթացին:

Փորձաքննության արդյունքները կքննարկվեն Ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի առաջիկա նիստում:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
ընդերքի վարչության ընդերքաբանական
փորձաքննության բաժնի փորձագետ Գոհար Քոչինյան